

ՔԱՃԱՆՈՐՕ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ
—X—
Գրութիւնք եւ ջիւն տրուի
—X—
Իրանուշահան տպոյ 10 տակ-
րիս եւ Երեւան տակ 10 տակ-
գումներու համար 40 Օլո
գեղջ կրնայ :

ՇՆԱԹ

Նախկին եւ գրաւ գրիւն
եւ յարգութեան հասցիին

Редакция на вѣствикѣ
«Шаржум»
Варна.
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲՈՒ ԵՒ ՇՆԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԸ

—X—

«Իրէտական սյուրսուրը ամբողջական է» կաւեռէ հեռագրիւրը: Քաջարի կրէտացիները տարիննրով կուռելէ ետքը, վերջապէս ձեռք բերին իրենց ինքնավարութիւնը որ պարզապէս նախագուռն է Մայր-Հայրենիքի հետ վերջնական ձուլման:

Վաստի քիչ շատ արկածախնդրական արշաւանքը, թեւս լիոյ պատերազմը պարզ լին շանցան, և թուրքիան հիմա՞կ է որ իր յաղթանակին պտուղը կը քաղէ... Կրէտէն օրինաւոր տէրերուն վերադարձնելով:

Թուրքը, հալածուած զազանի մը պէս, կը հեռանայ մուրալով: Այլ ևս երջանիկ կրէտացիներուն համար գոյութիւն չունի այն պատահար որ զիրենք անխնայ կը հարուածէր: Հիմա հսն երկրագործը՝ արտը հերկելէ ետքը, ազատ է իր երկրին պայծառ արեւին տակ հանգստանալով սքանչանալու իր ոսկեզօծ հունձքերուն վրայ, առանց կողպտիչ խաւովին արհաւիրքը կրելու:

Կրէտացիներուն հայրենասիրութեան և մանաւանդ անխոնջ յարատեւութեան համար մեր յարգանքի տուրքը հատուցանելէ ետքը, պէտք է ընդունինք թէ փրկութեան այս գործը եւրոպայի գործ է, առանց որո, աւաղ, ամենէն հերոսական ձեռնարկները դժուարութեանց կը բաղին:

Հայ ազգը իր վիճակակիցներէն մէկուն փրկութիւնը տեսնելով, յուսոյ տաք կայծը կը զգայ սրտին մէջ: Կրէտական խնդրին այս բարեբաատիկ լուծումը, եւրոպայի բարոյականի մասին կազմուած յոռի զազաւարը քիչ շատ մեղմացնելու բնութիւն ունի: Չէ, քաղաքակիրթ աշխարհը այնքան լիրբ, այնքան անձնատուր չէ եղեր, որ քան իբրաւմը կարծել կատար հայկական ջարդերու սեւ օրերուն մէջ, իր բռնած անորակելի ընթացքը: Կրէտէի փրկութիւնը, յոստազրէ

դրաւական մըն է նաեւ մեր մտաւորաւ եթէ ոչ ամբողջական փրկութեան, զէթ բազմաաւարտ աւելի անդորր և մարդավայելի գրութեան մը յանգելուն:

Հիմա, որ կրէտէի խնդրին հետ սպանօամերիկեան պատերազմը վերջացած է, մայրազուն Սրբեւելքի խնդիրը թմբուցեան մէջ է և անդժօրանա՞նք կոտորմը առաջը առնուած՝ եւրոպան յարմարագոյն բուլէն կը համարի իր ուշագրութիւնը զարձնելու զէպի Մակեդոնիոյ և Հայաստանի կողմերը, մանաւանդ Պարսկաստանի սահմանակից նահանգները, ուր, կըսուի թէ անխնայ շեշտուած է: Եթէ ու է անպատեհ միջոցէ պ մը չպատահի, ինչպէս Վենէցուէլլաի, նոյն մը կամ իտալոհայեջական կախ մը, որունք ասկէց առաջ այնքան ազդեալ եղան հայկական դատին, յուսալի է որ բարենորոգումներու խնդիրը ընթացին ձեռք առնուի պատմութեանց կողմէն: Նշմարելի է որ Ռուսիա վերջին օրերս մասնաւոր հոգածութիւն մը ցոյց կուտայ այն քրիստոնեայ ներուն հանդէպ, որունք կնճառախնդիրներ ունին թուրքիոյ հետ: Պոլսոյ դեռուանը, ամէնաւանէ աւելի, պնդելով կովկասի հայ զաղթականներուն հայրենիք վերադարձին համար, միւս կողմէ ալ ուժ կուտայ, երպիական վերջին ծանուցարին, զոր յիշած էինք «Շարժում» Նախորդ համարին մէջ, և արգարացի կը գտնայ Քոստայի նահանգի սերպերուն բողոքները:

Հիւսիսի մեծ պետութեան այս մարդասիրական հակումները արգարեւ կրնայ ըլլալ որ անկեղծ ըլլան, և յառաջընթաց նշանները սեպտիմ այն առաջարկութեան զոր բաւ Չարը. — զէնընկեցութիւնը:

Սակայն, անցեալը աչքի առջեւ բերելով, կը ստիպուինք, առ ցաւալի երկտարութիւնն ալ բնելու թէ մի գուցէ Ռուսիոյ խնամակերպ գաւառ արդիւնքն ըլլան այն առաջարկութեան, զոր ինքզնուց, թուրքիոյ մէջ վերջնական

եղած հոյակապ ընդունելութեան առթիւ, և այն պատճառով, որ Օսմանեան կայսրութիւնը տակաւ գերմանական սոսցուածի մը կը վերածուի:

Մեզ պէս տկար ազգերու համար յոռետես և թերահաւատ ըլլալը միշտ նախընտրելի է: Չափազանց լատաստութիւնը մեզ կուտեան կառաջնորդ և յոյժ միատարեր է նամանաւանդ մեզ, որ բնական հակում ունինք միշտ օտարին ապաւինել, ամբողջապէս անձնատուր ըլլալ այդ կարգի յոյսերու:

Չի մտնանք երբէք թէ Պուկարիան, Քոստան, Կրէտէն, դուրսէն «միայն» օգնութիւն մը ստացած են, իսկ բուն շարժող ուժը իրենք եղած են միշտ: Ոչնու թիւն ակընկալելը ամէն տկարի իրաւունքն է: Բայց միայն օգնութիւն:

Մեր բուն յոյսը ուրեմն, միշտ և ամենատես մեր խելքին, բազկին՝ յեղափոխութեան վրայ պիտի գնենք. ա՞յն է ճշմարիտ բարեկամը որ երբէք մեզի պիտի չըխաբէ, ա՞ն է մտղնիստ, ան ուժը որ մեզ պիտի բերէ համակրանք, հիացում, արտաքին օգնութիւն և վերջի վերջոյ կատարեալ փրկութիւն:

Հայութեան համար մեծագոյն վտանգը զանցառելի քանակութեան մը վերածուիլն է. և այդ վտանգը կիրականանայ այն ատեն, երբ մեր արցունքներուն ետին կատաղութեան փրփուրը պահուած չըլլայ ու մեր ցնցոտիներու տակ երդուեալ յեղափոխականի զէնքը չը զգացուի:

Երջանիկ ենք որ այսօր լուրովին զուրկ չենք այդ ուժէն, որ, որքան ալ աննշան, և սակայն, ի հաշիկին, շատ նենգամիտ հաշիւներ տակն ու վրայ ընելու ընդունակութիւնը կը վայելէ:

Հայը, տակաւին համբերատար և սպասող, մշտ արթուն պիտի հսկէ, տեսնելու համար թէ աչքարհիւ տէրերը ի՞նչ ճակատագիր վերապահած են իրեն: Եւ եթէ անոնք թէ նոյն յատեանական խաղերն են որ կը նորոգ-

ուին, նոյն հալածանքը և սեւ օրերը բաժին կը հանուին իր կեանքին՝ այն ատեն իր պիտաբը պիտի կատարէ:

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱԿԻՐ

ԻՄ ԵՂՔՈՐԸ

—X—

(Ազգայնագիտական խորհրդի Բոսնից)

Այս ծանր է եղբայր, ծանր, ապրել քեզ չը հասկացող արմարների մէջ. հոգիս բոցերի մէջ է. իսկ սիրտս բղկալու է վէրքերից...

Սիրում եմ անուշիկ հայրենիքս և սրբութեամբ պահում նրա պատէրները, բայց միշտ միշտ միտապում եմ, որովհետեւ ստում եմ արմարներին...

Սեւ, սեւ, փոխկալի մարերն ու խոնրը ճգում են երիտասարդ հոգիս, և չը կայ մի ձեռք, որ շօտփէր սրտիս ցաւած տեղերը...

Ոչ ոք, ոչ ոք: Տառապող սրտիս անձանիթ են թէ արտախոթիւն և թէ աղատութիւն. բայց նա բարախում է կատաղատար և արձապանք տալիս ժողովրդական հեծեծանքին...

Այս, եղբայրս, յաճախ գաղտնի արտասուէնք եմ թափում ժողովրդային արագգետ զապաղի վրա, բայց սա խնդրեմ, ինչ կարող եմ անել այս մեծեղացած և շար աշխարհում...

Անկեղծ և սպիտակ կոշիկն արձագանք տուող չը կայ. իմ հոգին էլ համբանում է Աստուծո ձայնի՝ ժողովրդական հեծեծանքի համար...

ՎԱՐԴՈ

ԱՐԶԱԳԱՆԳ

Բարիզի հայ ուսանողական Միութիւնը ազգային մեծ վիպասան Սրբութեանի յիշատակին նշուիրում գրական և երաժշտական երկերով մը կազմակերպած է, որ տեղի պիտի ունենայ նոյն մեր օրեր:

Երգեր, խմբեր, արտասանութիւն և բանաստեղծութիւն կարգաւ պիտի յաջորդեն իրարու, բայց առիկ շահեկանութիւն մը տալով այ երկերովին:

Նպատակս ուժըլում մը ընել չէ, քաջ վիտաւրով թէ ոչ ոք պուզաններու մէջէն տեղէն պիտի կրնայ շարժիլ Եւրոպայի ֆրէթիէնի սրահը երթալ ծափահարելու հա-

մարերեկոյ թիւն մասնակցողները : Եւ սակայն այս հանդէսը մեզ կը յիշեցնէ մեր նախորդ համարով հրատարակուած Բարեկի թղթակցութիւնը , որ , ծանր յանդիմանութիւններ կուղղէր Միութեան անպատկառ վերաբերում մը ունեցած բլլալուն համար Արուսեանի հոգեհանգստի պարագայներուն մէջ : Կերեւայ թէ Միութիւնը այս երեկոյ թով իր անդամներին մէկ քանիւն աւարաբը դարմանել կուզէ , ինչ որ գովելի է . բայց շատ աւելի դովելի կըլլայ , եթէ առ հասարակ Բարեկի բոլոր հայ ուսանողութիւնը , Ակումբի եւ Միութեան խորհուրդներ , սին վէճեր չստեղծէ , չպառակտուի , յիշելով թէ Բարեկ մէկին է արտասահմանի այն կէտէրէն որոնցմէ ազգը եւ իր գաւառը շատ բաներ կը ստանան :

Ուրիշ բան է Մանչէսթըրը . տեսէք անկէջ բան մը սպասելիք չունինք , եթէ այն տեղի հայերը համաձայն են «Վաղուան... Զօրնչին» , որուն համար բարեկամներէս մէկը , բարեկիւն մը , «բընաշուառ» մակդիրը ձօնեց , մէկիկ մէկիկ թուելով ինձ այն աղտոյտութիւնները որոնցմով զայն լեցընել կը ջանան քանի մը ուղտմելի անձանցներ , եւ չեն խցնիր իր կենտառու , յուսողրիչ եւ փրկարար պնակ մը , ապագայի պատկերացում մը մատուցանել հանրութեան : Բարեբախտաբար զգուանքը կը չափաւորի մեզ համար վարժութեան օրէնքով : փողոցային ինչ ինչ թերթերու յիշատակը այնքան թարմ է մեր մէջ , որ ալ սովորած ենք այս ավելցիկի հրա-

տարակու թիւնները անհամ զաւեշտաթերթերու շարքը գաւառի :

Չաւեշտ մըն ալ սա մեր անցեալ օրուան գաւառի քանի մը պարագայները : Մեր ընթերցողներէն ոմանք գանգատներ կուղղեն մեզ թէ շատ կարճ պատմած ենք զայն , վերջնելով միմիայն լսկական կէտերը : Ինչ կուզէք որ պատմենք . թող հրամայէիք , եթէ կուզէիք անպատճառ տեսնել հանրաձայնութիւնը զինուորը որ իր փաստաբանին զոյք ընել տուած էր իր հերոսական կեանքին անցքերը , իր պատերազմները , վկայագրերը , ժայռերը ու ապոււածները , Մարաշը , Այսլընը , Չէյթունը , վերջապէս փառաւոր իրական մը , որուն պակուցած ունեկողից ատենը : Հայ յեղափոխականին պատիւը զգալի կերպով կը բարձրանար սրահին մէջ , նամանաւանդ որ ինչ ինչ յայտաւանդներ կարեւոր գերկրկատարէին այս բարձրացման մէջ :

Չանց կառնեմ յիշելու միւս տրամադրիկ քաղցնէրը , այն տանութորական սուէթիմիտ , այն ահարկու , բոսնիկ , ալ հարաւրից «Չէ»-ն , երբ հաշտութեան առաջարկներ կըլլային ատենին կողմէն :

Իրաւ , այսքան հաստատամտութիւն , անմեղ մը պատճել սալու չափ առաջ զայնող պատուախնդրութիւն , հազուադիսա էր դատական տարեգրութեանց մէջ , ե . . . շնորհաւորելի :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս , 26 Հոկտ.

Փ. Պոլիս մէջ ջոջ-աղայները վերադարձողներն իրենց թրքաւայել նկարագրերը : Նորակաղծ թաղական խորհուրդին կանոնաւոր , եւ իրենց համար անսովոր , գործունէութիւնը արգիւրելու համար հայութեան ամենէն աւելի արտաբերող միջոցին դիմեցին : Թաղական խորհուրդը ազգային իշխանութեան վաւերացուելէ յետոյ , զիմեց կառավարութեան , զիստալով թէ պէտք է միանգամ ընդ միշտ , զօրեղապէս վարուի ազգին վտանգութիւնը շարաշար գործածող անհասանելու գէտ , ֆաղաբարտար առաջին անգամ կը յայտարարէ թէ եկեղեցական գործերու համար բնարուող ժողովին հարկ չը կայ վաւերացուի կառավարութեան , թէ Պատրիարքարանի վաւերացումը բաւական է . եւ թէ ընտրութիւնը միշտ պէտք է կատարել Պատրիարքարանի գծած օրէնքին համաձայն : Սակայն թաղական խորհուրդի պնդումին վրայ , կը վաւերացնէ եւ իմաստալից շնորհալի նամակով մը կը մտղիէ որ ազգային յատկապէս թեան համար իրենց ջանքերը արգիւրելու համար թաղական խորհուրդը կսկսի շատ իմաստուն որոշումներ սալ եւ զանոնք գործադրել : Ազգային գործերը կիւլին իրենց մեծախախտ թմբուկներէն , ամէն ինչ կանոնաւոր ձեռք առնելու կը մտնէ : Բանկալին պաշտօնեայնէր կը փոխուին . Ազգաստիւնամ վարչութիւն մը կը կազմուի : Թաղական խորհուրդը կսկսի տասնեակ ստորիններէ հետեւ կող զայնող թաղական խորհուրդներուն , Հոգաբարձութիւններուն եւ Կազմականներու Մասնախումբերուն փոխներու տակ թաղուած հաշիւները պահանջել : Եւ ահա մեր ջոջ-աղայները , սարսափահար այս գործունէութեան , կը հաւաքուին եւ իրենց ապագայ իտայտապահութեան առաջըք առնելու համար , կորոշեն ազգը անխնայաւոր :

Փ. Ա.

Թեան մասնէլ նորէն , Ութ ջոջ-աղայներու ստորագրութեամբ գրութիւն մը կը դրկուի Սօֆիա նախարարութեան թէ թաղական խորհուրդը զաղթական հայերէ կը բաղկանայ , որք խոտովութիւն հանել կը ճգնին ազգին եւ երկրին մէջ : Նախարարութեան հրաման կուգայ քաղաքապետը կը յանձնէ զայն ոստիկանութեան , որ կը հետազօտէ ամէն ինչ մի քիչ ծայրահեղ մէթոսներով եւ կը սեղեկապէս թէ թաղական խորհուրդի անդամները բոլորն ալ , բացի մէկէն որ արդէն հրաժարած է , սեղեցիլ եւ պատուաւոր անձեր են :

Այսպէս կը վերջանայ խնդիրը , Գ ժողովարար թաղական խորհուրդի համակրելի եւ զորագացած մի անգամ , իր դիրքի փոփոխութեան պատճառով , կը հրաժարի : Իմ գաղափարով պէտք է պատճել մեր ջոջ-աղայները : Եթէ ուրիշ բան չեն կրնար ընել , պէթ կրնանք բնարողի եւ ընտրելի իրաւունքներէն զրկել զանոնք որպէս զի ապագային կարող չըլլան ազգային ժողովներու գործունէութեանց արգիւր ըլլալ :

Առաջին անգամը չէ որ ջոջ-աղայները այսպիսի ստորին միջոցներու կրկնումն : Երբ թաղական խորհուրդի ընտրութիւնը կատարուեցաւ , անոնցմէ հինգը կերթան յայտաբան հետաքրտան պետին եւ կը յայտնեն թէ իր հայ պաշտօնեայնէրէն մին ամէն տեսակ խոտովութիւններ կը հանէ ազգին մէջ , թաղական խորհուրդի անդամ ըլլալու համար , եւ կը խնդրեն որ արտօքէ զայն իր պաշտօնէն , թէ եւ չատ լաւ գիտէին թէ մեր յարգելի բարեկամը մէկ բառ իսկ արտօսանած չէր բնարողի ըլլալու համար եւ ընտրութեան միջոցին վաստակ կը գանուէր օգտփոխութեան համար : Հետագրատան պետը կը յայտարարէ թէ այդ հայ պաշտօնեան իր ամենէն աւելի յարգած եւ սիրած պաշտօնեայնէրէն մին է որ պատիւ կը բերէ հայ ազգին , թէ ուրախ է

ՎԱՐԳ-ՊՈՏՐԻԿՈՒԼԻ ՅԵՇԱՍԱԿԱՐԱՆԸ (46)

Նազիմի հետ ունեցած վերջին աստակցութիւնից մի քանի օր յետոյ , մի քան Սիմեոն Թընկերը (փաստաբան) եկաւ ինձ մօտ եւ առաջարկեց ստորագրել այն թղթի վրայ , որ պէտք է տային Սուլթանին , յունարի ներմանը չարժանացած ձերբակալուաներին :

Ես ալ առաջարկութիւնը չընդունեցի : Թընկերը ինձ ուղեց համոզել որ գոնէ միւս բանտարկեալներին գործը զի բացուելու համար այդ քայլը անեն , որովհետեւ առանց իմ իմ ստորագրելու այդ թուղթը այնքան էլ նշանակութիւն չի ունենայ : Ես պատասխանեցի , որ Սուլթանից հրաժար չեմ ընդունիլ : Իսկ միւս բանտարկեալները ինչպէս կուզեն թող այնպէս վարվեն :

Թընկերը հետ եկել էր մի կոմիսէր , գողտնի սպարկաններէ : Երբ սկսեցի Սիմեոնի հետ հայերէն խօսել , թուրք պարտնը ինձ հրամայեց տաճկերէն խօսիմ : Իմ պատասխանը եղաւ . — Ես հայի հետ տաճկերէն չեմ խօսում , եթէ ձեզ հաճելի չէ , կարող էք զօրս գնալ :

Թընկերը ուղեւոր ինձ հանգրտանցել , տեսց որ նա Նազիմի կողմից է նշանակված : Այդ ժամանակ տաճկերէն մի քանի խիստ խօսքեր ասացի : Նազիմի հասցէին , որով եւ

Թընկերը ստիպուած եղաւ իր եւ կոմիսէրի բանակցութեանց վերջ տալ ու հեռանալ իմ սենեակից :

Գառը , ինչպէս վերն ասացի յունարից յետոյ ընդհատված էր , նորից սկսվեց : Մեզ մի քանի անգամ էլ դատարան կանչեցին . շատ կարճ տեւեց գառատանը , բայց արդէն քիչ բան էր մնացել , այնպէս որ միւս անգամին մեր վճիռը պէտք է տային :

Սակայն նորից գառը ընդհատվեց : Որչափ աշխատում էի չէի կարողանում հասկանալ թէ ինչու էին այդքան զանազա կերպով շարժվում : Ապրիլի սկիզբներին Մաքսիմովը եկաւ ինձ տեսնելու . եւ այդ ժամանակ արդէն հաղորդեց , որ իրանք թուղթ են տուել եւ թուրք կառավարութիւնից պահանջում են ինձ , երկու ուրիշ ուսասնդատակ հայերի հետ , որոնք ձերբակալված էին Տրապիզոնում , կարծեմ յունար ամերին եւ զատի էին նիթարկված : Այդ ժամանակ միայն Մաքսիմովը ինձ յայտնեց , որ թուրքերը իմ գաստ պէտք է վերջացնեն վեց ամսւայ մէջ , հակառակ պարագային , այսինքն եթէ քայքայեն առանց որոշումը տալու , պարտաւոր էին յանձնել իրանց : Վեց ամիսը արդէն անցել էր . ուստի ներք պահանջում էին ես տալ , քանի որ որոշեալ ժամանակում գառը չէր վերջացել :

Այդ մասամբ ինձ հանգստացրեց ,

կառավարութեան առաջարկն էլ , այն է Սուլթանին մեղալական տալ , ներում ստանալու համար , մի փաստ էր , որ գուցէ մենք ազատվէինք գառատարակելուց , մանաւանդ որ Զաւաիկը մօտենում էր : Այդ եղաւ բանտում Մաքսիմովի հետ ունեցածս վերջին տեսակցութիւնը :

Մեծ պատն էր , օրերը երկար , ձանձրանալի : Ժամեր ու օրեր անցնում էին յուսոյ եւ յուսախաբութեան մէջ : Հիւանդանոցի օդն էլ անառնելի էր դարձել , որովհետեւ արդէն եղանակը բուժական տաքացի էր :

Էլ այնքան խստութիւն չկար , հսկողութիւնը թուլացել էր . ես կարողանում էի հիւանդներին հետ խօսել :

Մի ծանր հիւանդ կար . սա՛ ութ թէ տաս տարի արդէն բանտում էր . ազատվելու օրերը հասել էին . նա մի անգամ ծանր հիւանդացու , բայց առողջացաւ : Չեղբով գանազան իրեր էր շինում , քաղաք ուղարկում ծախելու . եւ այդ դրամով կնոջը ու մի հատիկ մանչիւն պահում : Կիր լաւ կրն էր եւ սիրում իր ամուսնին , ուրիշ միջեւ վերջը հուսաւարով էր մնացել այդ ութ տարվայ անջատ կեանքի մէջ : Հիւանդ թուրքն էլ նրան եւ իր երախային էր շատ սիրում . ինքը լաւ եւ աշխատող մարդ էր . պատահմամբ մարդասպան էր դարձել եւ ընկել բանտը : Հիմա նրա

ուրախութեանը չափ չը կար : Ութ տարվայ անանջանքներ վերջը հասել էր . խեղճը . սրտատուփ սպասում էր գնալ եւ իր սիրելի կնոջ ու երախային հետ նոր կեանք սկսել : Բայց ճակատագրից այլ կերպ էր որոշել : Վտանգաւոր հիւանդութիւնից ազատված , սակայն դեռ բոլորովին չը կազմուրված , բժշկից թուլուտութիւն խնդրեց գնալ բանտը , առարկելով թէ դուրս գալու օրերը մտանցել են : Ինքը առնելիք շատ դրամ ունի բանտարկեալներին վրայ . եւ եթէ չը հաւաքի , այնուհետեւ կարած կը լինեն իրա համար : Բժիշկի խորհուրդներով մի նշանակութիւն չունեցան , եւ նա հիւանդանոցից դուրս գնաց : Երբ չորս օրից յետոյ կրկին վերագրաւ : Գիւանդութիւնը կրկնվել էր ստատիկ կերպով : Չորս օրից յետոյ , խուսար սենեակում , մի քանի իր նման հիւանդ գծախաների կողքին , հոգեւ առանդեց այդ խեղճ մարդը , մեզին առաջին կողմի կողմ մարդը , եւ իր տարախախտ կնոջ ու փոքրիկ զատակի յայտնեց օդը ցնդեցին : Այդ անողոք մահւան զէպը . սեղի ունեցաւ զիչեքվայ ժամը երկուսին . եւ կանգնած էին նրա ստեղծի տակ . լսեցի նոգելարքի խոխոտը եւ վերջին շունչը փչելը :

Չափազանց յուզված սենեակս վերագրաւ : (Շարունակելի) :

որ հայ սոցիալական և անարար-
ժանիքը եւ թէ իր պաշտօնատեղիին
մէջ չը թոյլատրենք բնաւ որ այդպիսի
խօսքեր ըլլան, եւ թէ պէտք է դուրս
ելին:

Ազգերը դաս... սոցիոլոգիան:

Այս ջոջ-աղայնիքն մին որ թուրք
զինուորներու հանդանակութեան
մասնակցած ժամանակ աղօթած էր
որ իրաւական ոտքը անպակաս ըլ-
լայ քրիստոնէայ աշխարհին վրայէ,
կերթայ հային սթիօ սպարանի ան-
րէնին. եւ հոն աշխատող մի կաթողիկէ
հայի արագաբուժը կը խնդրէ, յայտա-
բարելով թէ ազգին մէջ խոտոր թիւն
կը սերմանէ: «Եթէ հայ եղած ըլլար,
այնչափ պիտի չը ցուէի» կը. է մեր
տղէտ թրքամուրը: Տնօրէնը աղուոր
դաս մը կուտայ անոր եւ կը բա-
ցարէ թէ կրօնք եւ ազգութիւն
տարբեր բաներ են. թէ այն անձը
իր ամենէն աւելի յարգած անձերէն
մին է եւ թէ բաժնեկից ըլլալով
սպարանին, անկարելի է զայն հե-
ռացնել եթէ երբեք պէտք իսկ ըլլայ
ջոջ-աղայնի ֆիզիք կտաւրել:

Ուրիշ օր մը քահանան երկու
կողմէն քսանի չափ անձեր կը հրա-
ւիրէ զպրօցական խնդրին վրայ
խորհրդածելու եւ համարախոս թեան
զայու համար: Երբ այդ անձեր կեր-
թան եկեղեցի, կը տեսնեն թէ եր-
կու ստորկաններ կը սպասեն զրան
առջեւ, եւ հոն կը նստն մինչեւ կէս
զիշեր: Պոչ-աղայնիքն մէկէն էր որ
բերած էր զանոնք ճնշում բանեցնե-
լու համար:

Տեսէք, ի՞նչ ճիւղաճիւղ կան մեր
մէջ...

Թաւրիզ, 20 Ապրիլ

Սարևասի դասաւորը եւ հայերը

Վերջերս Սարևասի—Սոյ—Ուրմիտ
գաւառը ընտրելից մի հայասէր պար-
տիկ պաշտօնեայ, Վանի նախորդ
հիպատոս Միքայէլ Զիւսէյի խան,
որը ծանօթ է Վանայ կոտորածներին
միջոցում հազարաւոր հայ կեանքեր
փրկելովը:

Ամէն հայ մի առանձին պարտա-
կանութիւն ունի սրտովին շնորհա-
կալ լինելու այդ բարերար անձից,
որը իսկապէս արժանի ընդունելու
թիւն դասաւորութիւնի հայերի կողմից
եւ Ս. էջմիածնում:

Սակայն, թաւրիզից Սարևասի, իր
պաշտօնատեղիին գնալու համար 50
թուման (250 ֆրանք) փողի պէտք
ունենալով, Սարևասից հայ վաճա-
ռականները զլանում են այդ գու-
ղումարը փոխ տալ յիշեալ հայասէր
պաշտօնեային... Այդ շնչին փո-
խադրութեամբ Սարևասից չը կա-
մեցան յայտնելու իրանց վրին ծան-
րացած կրօնատարութիւնը, մա-
նաւանդ իրանց զատուորին, որը
Պարսկաստանում ազատ է հազարնե-
րով խել փողովորից, իրա ուզած
կերպով վարելի նրանց հետ...

Սարևասիցներին այս կոչում վերա-
բերումը եթէ մի անխիղճ եւ հայաս-
նաց զատուորի պատահած լինէր,
չարաչար պէտք է ստ ժէին. եւ-
թարկվելով նրա վրէժխնդրութեան:
Սակայն, բարեբախտաբար, այդ ան-
վայել եւ ամբողջի վտրմուքը կա-
տարվել է մի վերին աստիճանի բու-
րեկից պաշտօնեայի հետ...

Մի ԲՁԱ

Պ Ա Ն Ա Շ Ի Տ

Չօպանեան արձա եց իր գրա-
կան հանդէսին ածալին թիւը,
48 էջէ բարկացած, մաքուր
տպագրութեամբ, այլարանական
գունաւոր կողքով: «Թուրքի
Փառքին հեղինակը հանդարտ,
թափանցիկ տողերով վերլուծում
մը կընէ իր հանդէսին սկիզբը՝
մեր ազգային արդի գրութեան
վրայ, ընթացողին երակներուն
մէջ ուժգնօրէն ներարկելով յոյ-
սի, քաջալերութեան, բարոյա-
կան կազմաւորմի անուշ նեկ-
տարը: Ու ասով կը պարզէ Անու-
հիւսի լայն, բազմակողմանի ծրա-
զիրը, որուն պիտի հետեւի ան
կէտ առ կէտ, անսայթաք:

Այնքան աղուոր, գեղարուես-
տօրէն կառուցուած է հանդէսին
այս առաջին թիւին գրական
շինուածքը, որ 48 էջերը պարզ-
ղուն լոյսի շրջումով կը սահին
կանցնին աչքերու գ ցանցէն,
միտքի վրայ թափելով թիւն մը գոր-
ծելով: Հոն ներկայ են մէկ մասը
պրօսահայ գրականութեան վեր-
ջին վեց եօթը տարիներուն ներ-
կայացուցիչներուն, որոնք ժա-
մադիր եղած են հանդէսին է ե-
րուն մէջ: Իտալական պատկե-
րալից վրէժներն քով Սիւսեանին
ոսկեծոյլ լեզուին զրահանման
գարբնուածքը. Օսեանի յուրիշ
ծաղրին փողարը անապատին ա-
ւազներուն մէջէն հառաչելով,
եւ ուրիշներ, նոր բայց մար-
զուած գրիչներ, թոյլ չեն ձգեր
գրական այս շղթային օղակները,
զորս Չօպանեան կը կռէ կը զօգէ
արեւօտագէտի ճարտարութեամբ,
այնքան ներգաշնակօրէն:

Հանդէսին յոյժ յառկանչական
կողմը սա է սր հոն պիտի ել-
բայրակցին ուսուհայ և թրքա-
հայ գրականութիւնները. և, ինչ-
պէս կը յայտարարուի, կով աս-
եան յայտնի գրիչներ խոտացած
են երեւալ նահիտի մէջ, նուր-
բագործելու համար ազգային ար-
դի գրականութեան երկու մեծ
հոսանքներուն այս բարեգէպ
գիրկընդխառնումը:

Աչքի առջեւ լիբելով այժմ
արտասահմանի երկնքին տակ ապ-
րող հայութեան առուարութիւնը,
մանաւանդ հողի կան այն գրու-
թիւնը, որուն և նթարկուած է ան
ակամայ, անկարելի է չխոտա-
վանիլ թէ վիճուղ առօրեայ մա-
մուլին քով, օգտակար ուսումնա-
տիրութիւններով զբաղող գրա-
կան հանդէսի մը պէտքը զգալի
էր: Չօպանեանի հանդէսը իր
ցոյց արւած ուղղութեամբը՝
այդ կարեւոր պակասն է որ կը
լինէ. և զրահան շշտակելի
ծառայութիւն մը բնելով հան-
դէսը, նեղուած, խոյսուած, վհատ
սրտե ու պազկեցնող սփոփանք
մը կը ներշնչէ:

Շ.

Ք Ր Ո Ն Ի Կ

Պատրիարքը իր անձնական
քարտուղար Վահրիճ վարդապե-
տին, յանձնարարել է, պատրի-
արքարանի իրաւասութեան ներ-
քեւ զանուղ վիճակներու և թէ-
մերու եկեղեցիներուն, քահա-
նայներուն, ուսուցիչներուն և
ուսանողներուն մէկ մանրամասն
վիճակացոյցը պատրաստել:

Պատրիարքը անշուշտ լմանալ
կուզէ թէ Վարդերէ և կողպուտ-
ներէ եւ քր զեռ որչափ բան կայ
կանգուն մնացած...

Մարաշի որբնային մէջ
պատասպարուած որբերուն թիւը
60էն 81 բարձրացնելու համար,
պատրիարքը բանը որոշած է որ-
բերու սնտուկէն այդ որբանոցին
արուած նպաստին վրայ յառե-
լում մը ընել:

Պատրիարքարանը 30 սակի
զրկած է Մալաթիայի մէջ բաց-
ուելիք որբանոցին սկզբնական
ծախքերուն համար:

Էջմիածնէ հասած հեռագիր
մը կը ծանուցանէ թէ Գուրեան,
Իւթիւճեան և Աշոտ Փափաղեան
վարդապետները եպիսկոպոս
ձեռնադրուել են:

Թղթակից մը կը տեղեկա-
գրէ թէ բողոքական միսիօնա-
րարներու ձեռքով Բիլէն Խար-
բերդ փոխադրուած 49 երկուս
որբերը պարզապէս բողոքական
ոգիով կը հրահանուին, բնաւ
եկեղեցի չեն տալու իր և զուրկ
կը անան նոյն իսկ խոտովանու-
թենէ և հաղորդութենէ:

Խարբերդի Առաջնորդին ըրած
գիտողութեան՝ բողոքականները
պատասխանել են. «քանի որ
մենք կը հողանք ու կը խնամենք,
այլ ևս ձեզի համար գործ չմնար
և ո՛չ ալ անոնց կրթութեան մա-
սին դիտողութիւն ընելու իրա-
ունք ունիք»:

Փիլիպէի երկաթուղիի նոր
կայարանին մէջ անցեալ շաբթու
պիտոմեն երկուսուսու միջոցին
գերեզմանաքար մը գտնուեցաւ,
վրան արձանագրութիւնով: Քրիս-
տոսէ երեք դար առաջ շինուած
է, մէջը կան ոսկորներ և հոտա-
ւետ հեղուկներ պարունակող շի-
շեր: Այդ գերեզմանաքարը Ֆի-
լիպէի մատենադարանը տարուե-
ցաւ:

Տիգրիսի մէջ կը կարգանք.
Ֆիլատէլիայի փոքրածիւ հայ
գաղութը Հայաստանի մէջ 20 որ-
բերու խնամքը իր վրայ առած
է:

Նոյն թերթը կը յայտարարէ
թէ Պոլսոյ Փունջ լրագրէն քաղ-
ուելով Վառնաի թերթերուն մէջ
Մաշտոց վարդապետին դէմ հրա-
տարակուած աննպատակ նարկե-
նիքը անհիմն են:

Ուրախ ենք:

Հայ զինուոր մը Յակոբ Կի-
րակոսեան, որ 12րդ զօրաբա-
նակին հետ Կրին Մօրը գացած

էր նշանակուած Նամար, 150
զօրքերու մէջ ինք ամենէն ա-
ռաջ հինգ անգամ շարունակ նը-
շանակէտին զարկած ըլլալուն
համար պատու տնշան ստացել է:

Ամերիկեան շանակին մէջ
ղինուրա՛ն հայ բժիշկ Տր. Եր-
կանեան, ժողովի մը մէջ ատե-
նախօսութիւն ընելով, վաժառ
յայտներ է որ հայերը զինուոր
ըլլան՝ ապագայ Հայաստանի
պաշտպան բազմակներ այժմէն
պատրաստելու համար:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Դ Ե Պ Բ Ե Ր

ՌՈՒՍՈՒՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ռուսական Նով. Վրէժի լրա-
գիրը սաստիկ կերպով կը բողոքէ
Եւրոպեան համաձայնութեան դէմ,
որ միայն յուզման մէջ կը գնէ
Արեւելը և Ռուսիան կը զրկէ
այդ երկիրը խաղաղ ցնելու պաշ-
տօնէն: Համաձայնութեան դրու-
թիւնը, կըսէ Վրէժի լրագրի թեր-
թը, շահաւետ է միայն այն պե-
տութիւններուն համար, որոնք
կուզեն սազնապ յարուցանել Ա-
րեւելքի մէջ և Թուրքիան բա-
ժանել:

«Այժմ որ Թուրքիոյ ձեռքը
մնացած են միայն երկու քրիս-
տոնեայ նահանգներ, որոնցմէ
մէկը՝ Մակեթոնիան՝ մեզ ցեղա-
կից է, և մյուսը՝ Հայաստանը
կպած է մեր ահմաններուն,
մենք պէտք է խօսքով և գոր-
ծով հաստատամտութեամբ ցոյց
տանք աշխարհի, որ անոնց հա-
մար մենք չենք կրնար թոյլ տալ
Եւրոպական համաձայնութեան
նոյնպիսի երեք տարիներ, ինչ-
պէս տեսանք կրէտէի մէջ: Ռուսի
կրէտէի գործերուն վերաբեր-
մամբ մնալով Եւրոպական համա-
ձայնութեան մէջ, մենք մեր
պատասխանատուութեան տակ կառ-
ենք Մակեթոնիայի և Հայաս-
տանի վիճակը և կարգապահու-
թիւնը և, ո՛չ մէկու թոյլ չենք
տար որ այս բանին խոտնուին
կամ օգնեն»:

Քանի մը օր ետքը, նոյն թեր-
թը բերանը բիչ շատ վոխելով,
կարծիք կը յայտնէ թէ չորս պե-
տութեանց համաձայնութեան քա-
ղաքա՛նութիւնը կատարելապէս
կը համապատասխանէ ուստիկան
կառավարութեան մտադրութիւն-
ներուն. և թէ՛ միայն պետու-
թեանց մէջ ախրող միարանու-
թեան շնորհիւ էր որ հնարատր
եղաւ վերջ տալ Կրէտէի անկեր-
պարան վիճակին, թույլ քերքը դուրս
հանել, և զուր բանայ այն բու-
րենորդութեան բուն, որոնք ար-
դէն վաղուց մշակուած էին Պոլ-
սոյ գեօպոններուն ձեռքով:

Ա. Ն. Գ. Լ. Ս.

Յայտնի է թէ Լօնտրաի Լօրտ-
րաղաքապետը տարեկան խնճոյք
մը կուտայ, որուն մէջ օրուան
նախարարութեանը քաղաքական

աւեհախօսութիւն մը կարտասանէ :

Այս տարի մեծ հետաքրքրութեամբ կը սպասուէր Լորտ Սալզպուրիի ճառին, ֆրանկոֆոնիական խնդրին պատճառով : Նախարարակազմը բաւ թէ Թրանսալի Անգլիոյ միջեւ պատերազմը մը վտանգը այնքան մտախառն չէր որքան կը նկարագրուէր մամուլին մէջ, և սակայն խոհմութիւնը կը պահանջէր ամէն պարագայի մէջ կազմ և պատրաստ գտնուիլ, հակառակ պարագային, անակնկալի չը գալու համար : Լորտը այս առթիւ կը ներփոզէ Թրանսալի ցոյց տուած իմաստութիւնը և ոչ մտաւթիւնը, որ այս փափուկ պարագայներուն մէջ եւրոպան ահաբեկի պատերազմի մը արհաւիրքներէն ազատեց :

Ձէնընկեցութեան խնդրի մասին խօսելով, Լորտ Սալզպուրի գովասանքներ շարունակեց Զարին, բայց գիտել տուաւ թէ մինչև առաջարկին իրականանալը նախըզուրոյթները ձեռք առնելը միշտ հարկաւոր է : Խնդիրը, բնաւ Լորտը, քանի մը ազդեցութեամբ թեան բաժանման վրայ է, ուրեմն ու է պատերազմ մը շատ շուտ կընայ պայթիլ : և ասոր համար է որ Անգլիա չկրնար դադարեցնել իր պատրաստութիւնները որոնց նպատակը նոր աշխարհակալութիւններ և կամ արկածախնդ ձեռնարկներու մէջ մտնել չէ :

Յետոյ, նախարարակազմը հերքեց այն տարածայնութիւնները թէ Անգլիա գրաւել կուզէ Կրէտէն, Սիրիան, և թէ միտք ունի թեւարկութիւն հաշակել Եգիպտոսի վրայ : Եգիպտոսի մէջ մեր ունեցած դիրքին այնքան գոհ ենք որ, ըստ Լորտը, հարկ չկայ նոր բարեփոխումներ մտածել :

Կրէտէի խնդրին լուծման համար խնդակեցեալ Եւրոպայի և ծովակալներու, որոնք այնքան ձեռնհասութեամբ կատարած եղանակներն են :

Գալով Ամերիկայի, Լորտ Սալզպուրի կարծիք յայտնեց թէ Մ. Նահանգաց Եւրոպեան գիւտնադիտութեան բեմին վրայ երեւալը ընդհանուր խաղաղութեան անսկէտով թէ եւ փաստակար կրնայ ըլլալ, և սակայն այդ միջամտութիւնէն Անգլիա ոչինչ ունի կորսնցնելիք :

Իսկ անխնայականներու մասին, ձեռք առնուելիք միջոցներու ազդեցութեան մասին բոլորովին թեւահաստ գտնուեցաւ :

Եւ սակայն Լորտը այնքան խօսքէ ետքը չկրցաւ կամ չուզեց բացորոշ կերպով յայտնել թէ պատերազմի պատրաստութեանց իսկական պատճառը ի՞նչ է :

Այդ պատրաստութիւնները օրէ օր ծաւալուն հանդամանք մը կառնեն :

Թրանսալիա անգործ չմնար :

Թրանսալի ծովակալները ժողով գումարելով, ծովային ստաբիլիտետի յայտարարեցին : Այսօր վաղը, ֆրանսական 30 պահեստի մարտանաւեր ծով ելլելու վիճակի մէջ պիտի դըրուին :

ԿՐԷՏԱՆԻ ԽՆԴԻՐ

Եւրոպայի իշխանին կրէտի անձնայ առաջադրել անուանուող կատարուած իրողութիւն մըն է : Պետութիւններն ու Սուլթանը տուած են իրենց հաւանութիւնը : Իշխանը Գաննա պիտի երթայ ռուսական մարտանաւով մը : Բունաստանի նախարարակազմը Պ. Չայմիս հեռագիր մը ընդունեց է կրէտէի գործադիր յանձնաժողովէն, որ կապահովեցնէ թէ քրիստոնեաները իրաց վիճակէն գոհ ամէն ջանք պիտի թափեն այսուհետև չկուտու համար կրէտէի իսլամներուն հետ :

Ծովակալները ծանուցեցին յիշեալ յանձնաժողովին ինչպէս նաեւ իսլամ երեւելիներուն թէ այժմ կը զգուշանան զով գրաւ նուաճ բոլոր զէնքերը յանձնուելու են :

Հեռագրատան թուրք վարչութիւնը արտաքուեր և անգլ. իսթըրն թէլեգրաֆի ընկերութիւնը անցեր է անսր տեղ :

Արթըթիւրի սպասամուկները կրակ բրած ըլլալով՝ օսմ. զինուորները տանող վերջին օսմ. շոգենաւերուն վրայ, ծովակալները երկու զօրազունա զրէր են յանցաորդները ձերբակալելու և զինաթափ ընելու համար :

ՏՐԷՅՖԻՒՍ

Բարիզէն Էնտերանտան Պէլժըրպրին կը գրեն :

«Լատտեղեակ անձեր կը նկատեն թէ Տրէյֆիւսի խնդիրը, որոշուած լինեցած խնդիր մըն է : Տակաւին յարուցուած աղմուկը, յետին արձագանդներն են վերջացող ճակամարտի մը : Վճռաբեկ Ատեանը բերել պիտի տայ Տրէյֆիւսը, հարցաքննելու համար : վկայութիւններ պիտի լսէ և պիտի պատրաստէ իր քննութեանց տեղեկագիրը : Պիտի կանչէ Բիքառ գնդապետը հարցաքննելու համար : 1894ի գաղտնի պիտի ջնջուի : Տրէյֆիւս ազատ պիտի ըլլայ և օրէնքին պաշտպանութեամբ, իր թշնամիները ալ ևս չպիտի կրնան յարձակիլ անոր վրայ : Միայն ստիպալի մարտի խոտութեան մը յիշատակը պիտի մնայ : և յետոյ ամէն բան իր սովորական վիճակը պիտի ստանայ : Զօլա վերստին պիտի գտնէ իր տունը և մատենադարանը : Մաքրոր պիտի վերստանան իրենց հաւատարակչութիւնը և ֆրանսացիներուն քաղաքական և մտաւոր գործունէութիւնը զէպի ուրիշ առարկայներ պիտի գաղտնայ, օգտակարա-

պէս գործածուելու համար, Երանի՞ թէ :

ԻՆՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ուշիկի թէ կը հեռագրեն թէ Պ. Մաք Քրէյլի պահանջներ է որ ֆրիլիպպեաններու խնդրին համար Սպանիոյ պատասխանը ամբողջութեամբ լրեն հարցորդուի հեռագրով :

— Ժընէվէն կը հեռագրեն. Եւրոպայի կայսրուհին սպանիչը՝ Լուքէնի մշտնջենսուոր առանձնական բանտարկութեան դատապարտուեցաւ :

— Թրանսալիան թերթերը կը գրեն թէ Թրանսալիան քաղաքներէն է որ հրամայած է Մարշանի իր 150 սենեկայիններով Փաշտայէ մեկնել և ձիպուլի երթալ : և ոչ թէ Լորտ Սալզպուրիի կողմէ արուած վերջնագրի մը հետեւանքով :

— Անցեալ Բշ. Թուրքան փաշա, թիկնապահ մը և ռուսական զեպանաստան թարգման Մաքսիմովի հետ Լիվաթի մեկնեցաւ, Սուլթանին կողմէն ոչ ջոնելու համար Ձարը և Ալի Օսման պատանջանը յանձնելու համար :

— Ստանտարտի Պոլոյթ թղթակիցը կը գրէ թէ Պոլոյթ Դատական պաշտօնատունէն շարքա տուղտներ Ժընէվ վախեր են, պետական աւագ կարեւորութիւն ունեցող թղթեր թոցնելով միտսին :

Կաթով կոտական սոյուսմով նորապսակ եպիսկոպոսներէն Տ. Գէորգ Ի. թիւճեան, Լոնտոնի, Բարիզի, Պուլկարիոյ և Ռուսիոյ հայ գաղթականութեանց հոգեւոր հովիւ նշանակուեր է :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Այսօրուան «Իրաւունք»-ի մէջ կը կարդացուի ծանօթ գատին խնդարութեամբ : Ձէնը կարծեք որ խմբագրակազմին մեկնուած այս աստիճան խանդաբէր սոյն թերթին գատողութեան և ոչ մտաւթեան մեքենան : Դարձեալ կրկնենք թէ ոչ «Շարժում»-ի գատողութեան մը յօդուածին իրաւացի կամ անիրաւ ըլլալուն դատաւարութիւնը եղած է : Դարձեալ յայտարարենք թէ Պ. Ղ. Թահմիզեան դատաւարուեցաւ ինքիւր զլիսուն հերքումներու հոտանքներ վաղցուցած ըլլալուն համար, և թէ դատը տեղի չէ ունեցած «թերուզէմ»-ի օրէնքին համեմատ :

Ինչ և է : Ձեռք ուղեր այս խնդրին վրայ երկարաբանել : Մինակ, յիշեալ թերթին «Հէմ-չէրիական» ծիծաղելի կողմնակցութեան վրայ մը զարմանքին չետ ցաւերն իս ր յս անենք :

— Ով որ գիտէ Սեղրակ Տ. Գրիգորեանի (երգիկայի Դարաքիլիսէ վերջին) ուր գտնուիլը, թող փութայ խմբագրութեանս հարցրիլ :

— Ազգայն. մեր քովը նամակ ունիս :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ՆԱՐԺՈՒՄԻ
Կը տպագրուին ամէն լեզուէ սյցեատման, հասցէտման, նամակագրութեան, հարաւանկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաեւ պրօշտիւններ :

Գրենք յոյժ գլխաւոր տղերք : Ուրիշ քաղաքներէ և կամ յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Location/Item and Price. Includes items like Կառնա 31 Հոկտեմբեր, ՊՈՒՂՏԱՅ, Կազոն, Լիպրա, 55-58, 56-58, 9-8.50, Ֆրանք, Արապա, Լիպրա, 55-60, 56-60, 9-12, Ֆրանք, ԱՐԲԱ, Լիպրա, 42-50, 56-60, 5.80-6.20, Ֆրանք, ՄԻՍԻՐ, Կազոն, 55-57, Լիպրա, 5.80-6, Առապա, 55-60, Լիպրա, 6-6.20, Կրկնէ 8-10 վազոն, 25-30 առապ կէլմէքաէ տիր, ԵՆՆԻԱՅ, Կրկնէ 20-25 արապա կէլմէքաէ տիր, 5.40-5.70, Ֆրանք

Table with 2 columns: Location/Item and Price. Includes items like Կառնա 5-6 արապա կէլմէքաէ տիր, 5.80-6, Առապ, 55-60, Լիպրա, 4.60-5, Ֆրանք, ՅԱՍՈՒԼԵՍ, Կրկնէ 5-6 առապա կէլմէքաէ տիր, 100 օգտար 18-22 Ֆր. մալա կէլմէքաէ տիր, Առապա մուամէլլաթի նարոլուն 21 Ֆրանք հիսապր իլէ տիր, Կրկնէ 25-30 վազոն, 100-120 արապա պոլոտայ, 20-25 արապա արապ կէլմէքաէ տիր

ՎԱՐՊՈ

ԵՐԿՈՒՍ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱՆ ԿԵՍԵՔԻՏ)
(Գրին 1 Ֆրանք)
Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին վառնալի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսչուք Հայկ Մայրիկեանի սրճարանը, Սօֆիա՝ Տ. Մուշկ Արժրոնիի քով :
Մտերմ մամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Ռուսութեան գրահերը» :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»
Վառնալի մէջ կը վաճառուի Մուսալլա, թահմիզ Կէզրիպէօյի քեանի խանութը, և Ապուլի բրահման միջկիթին գէմը հայկական գրատունը, Ա. Չարպահանէի տնի քով :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ
ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱԶԱՆ ԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԲԵՐԼԻՆԻ ԳԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ
Գրին : Ֆրանք
Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը :